ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Հայկավան համայնք

Թիվ 16/26

„02„ -03 2016թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆԻՆ

Հարգարժան պարոն մարզպետ՝

Ձեզ ենք ներկայացնում Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի ղեկավարի կողմից 2016թվականի փետրվար ամսվա ընդունված որոշումները, կարգադրություն չի արձակվել:

Առդիր «6» թերթից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«25» փետրվարի 2016 թվականի N 09 -Ա

ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հագ սցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Լենա Լալայի Լալայնին պատկանող տնամերձ հողամասին /ծածկագիր 04-020-045-015 / տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 18/1 փողոցի թիվ 1 հողամաս.

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2016 թվականի փետրվարի 25
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«19» փետրվարի 2016 թվականի N 08-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման,անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և /կամ/տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին » N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006թվականի օգոստոսի 20-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին »թիվ 2 որոշումը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի բնակիչ՝ Բագրատ Ռաֆիկի Մարգարյանին պատկանող բնակելի տանը /ծածկագիր 034-007/տալ հասցե Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքի 10 փողոցի թիվ 41 տուն .

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Արմավիրի տարածքային ստորաբաժանում՝պետական գրանցման համար.

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2016 թվականի փետրվարի 19
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» փետրվարի 2016թվականի N 07 -Ա

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐՄԱՎԻՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ» ՊՈԱԿ ԿՈԼԵԳԻԱԼ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄՆՈՒՄ՝ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32հոդվածի 17-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2015թ-ի հոկտեմբերի 16-ի «ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանում լրացում կատարելու մասին» N883-Ն հրամանի.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ

1. Վազգեն Սաշայի Մուրադյանին նշանակել Արմավիրի մարզի Արմավիր համայնքի «Արմավիր միջնակարգ դպրոցի» ՊՈԱԿ կոլեգիալ մարմնում՝ որպես խորհրդի անդամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Ռ.Ֆ.Մարգարյան**

2016թվականի փետրվարի 15
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«15» փետրվարի 2016 թվականի N 06-Ա

ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 22 ՓՈՂՈՑ ՏՈՒՆ 2 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԵՎ ՇԵՆՔ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՄԵՐՅՈ�ժԱ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ և ՄՅՈՒՍՆԵՐԻ ՄԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Արմավիր գյուղի բնակիչ՝Սերյոժա Հովհաննեսի Հարությունյանի գ.Արմավիր 22 փողոց թիվ 2 հասցեում գտնվող գույքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու վերաբերյալ դիմումը;.

Հաշվի առնելով,որ կառույցը իրականացվել է մինչև 15.05.2001թ. և դրա պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքներն ու օրենքով պահպանվող շահերը, կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների խախտումներով,չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք,հողամասը համապատասխանում է հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1,2,3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում,ղեկավարվելով ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ կետով ՀՀ կառավարության 18.05.2006թ թիվ 912-ն որոշման կարգով սահմանված և սույն որոշման 22-րդ կետի 1-ին ենթակետով. «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. Հաշվի առնելով, որ գույքը բավարարում է «Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին» օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով նախատեսված պայմաններին՝ճանաչել քաղաքացիներ `Սերյոժա Հովհաննեսի Հարությունյանի /ծնված 26.12.1960թ./ Մարգարիտ Արամայիսի Սարգսյանի /ծնված 16.12.1960թ./ Սաթենիկ Սերյոժայի Հարությունյանի /ծնված 03.12.1979թ./ Հովհաննես Սերյոժայի Հարությունյանի /ծնված 05.04.1982թ./ Արմենուհի Սերյոժայի Հարությունյանի /ծնված 21.06.1984թ./ Քրիստինե Սերյոժայի Հարությունյանի /ծնված 02.03.1989թ./ գույքային իրավունքները՝ճանաչելով նրանց սեփականության իրավունքը Արմավիրի մարզ գյուղ Արմավիր 22 փողոց թիվ 2 հասցեում գտնվող 1000 քառ/մ օրինական հողամասի վրա գտնվող 1995թ-ին կառուցված բնակելի տան՝186 մ/^{2} աստիճանավանդակի՝4.20մ/^{2} անասնաշենքի՝ 21.50մ/^{2} հավաբնի՝ 3.40մ/^{2} , թոնրատան՝ 14.00մ/^{2} և 1999 թվ-ին կառուցված ծածկի՝55.80մ/^{2} ու պարսպի՝ 13.5 մ/^{2} նկատմամբ.

2. Հողամասին կից 50 քառ/մ ավել զբաղեցրած հողամասը հատկացնել անհատույց սեփականության իրավունքով;

3 Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր կադաստրի պետական կոմիտեի մարզերի միավորված ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ՝ Սերյոժա, Սաթենիկ, Հովհաննես, Արմենուհի, Քրիստինե Հարությունյանների և Մարգարիտ Սարգսյանի սեփականության իրավունքը և տրամադրել անշարժ գույքի սեփականության վկայական.

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Ֆ.Մարգարյան

2015թվականի փետրվարի 15
գ.Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի
Արմավիր համայնքի,1փ 19շ 71-510

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«01» փետրվարի 2016 թվականի N 05-Ա

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության Օրենքի 32-ր հոդածի 17-րդ մասով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Ստեղծել Արմավիրի մարզի Արմավիր գյուղական համայնքում գնումներ ընթացակարգը կատարելու գնահատող հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:
2.Սույն որոշումն ուժի մեջ է ընդունման պահից:

Համայնքի ղեկավար՝ **Ռ.Ֆ.Մարգարյան**

2016թվականի փետրվարի 01
գ.Արմավիր

Հավելված
Արմավիր գյուղական համայնքի
Ղեկավարի 2016 փետրվարի 1-ի
N 05-Ա որոշման

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

Հանձնաժողովի նախագահ՝	Վազգեն Մուրադյան
Քարտուղար՝	Ալավերդի Կարապետյան
Անդամներ՝	Մարինե Սարգսյան
	Սերյոժա Երիցյան